



**ՋԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌ-ԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅԱՄԱՆԱԳԻՐ N**

ք. Երևան

«---» -----թ.

/ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, անձնագրի տվայլները, հասցեն/  
այսուհետ՝ «Պատվիրատու» մի կողմից և «**Կասանդրա Թուրս**» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Մխիթար Մելիք-Շահնազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին.

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հավելված 1-ում նշված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ):

1.3 Ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվում է հավելված 1-ում:

1.4 Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի հավելված 1-ում նշված ծառայությունների ժամկետի ավարտի պահին:

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

**2.1 Կատարողը պարտավոր է՝**

2.1.1. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով,

2.1.2. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով, Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում,

2.1.3. Կատարողը Պատվիրատուի պատվերը ընդունում և հաստատում է տվյալ ժամանակահատվածում հանգստյան տանը, առողջարանում, հյուրանոցում առկա հնարավորությունների սահմաններում:

2.1.4. Իր մատուցած ծառայությունների համար պահանջել 3.1. կետում նշված գումարը:

**2.2 Կատարողն իրավունք ունի՝**

2.2.1. չմատուցել հավելված 1-ում նշված ծառայությունները, եթե Պատվիրատուն չի փոխանցում 3.1. կետում նշված գումարը սույն պայմանագրին համապատասխան:

2.2.2. Կատարողը իրավունք է վերապահում փոփոխելու ծառայությունների արժեքը կախված կացության վայրերի կողմից ներկայացված սակագների փոփոխություններից, այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին: Սակագներում ներառված չեն լրացուցիչ ոչ հիմնական ծառայությունների արժեքները (լողավազան, սաունա, բար, ռեստորան, բիլիարդ և այլ) և

վորոնշյալ ծառայություններից օգտվելու դեպքում վճարումները կկատարվեն գործող սահմանված սակագներով՝ կացության վայրերում:

### 2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. պահպանել սույն Պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,

2.3.2. հյուրանոցային օբյեկտում չխախտել հասարակական կարգը, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները, չվնասել գույքը և կատարել հյուրանոցային տնտեսության օբյեկտի ներքին կանոնակարգով սահմանված պահանջները, հակառակ դեպքում պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

### 2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1 ստանալ սույն պայմանագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները:

## 3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1 Պայմանագրի գինը կազմում է՝ ----- ՀՀ դրամ, որից՝

3.1.1. փաթեթում ներառված հյուրանոցային կացության արժեքի գինը կազմում է ----- ՀՀ դրամ,

3.1.2. սոցփաթեթի շրջանակներում՝ ----- ՀՀ դրամ,

3.1.3. պատվիրատուի հաշվին՝ ----- ՀՀ դրամ, ներառյալ բոլոր տեսակի հարկերը:

3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին Պայմանագրի 3.1 կետում նշված պայմանագրի գնի 100 /մեկ հարյուր/ տոկոսը Պատվիրատուն վճարում է Պայմանագրի ստորագրման պահից՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրից հրաժարվելու կամ ամրագրումը չեղյալ համարելու համար Պատվիրատուն գրավոր կարգով պետք է դիմում ներկայացնի ոչ ուշ քան ծառայությունը ստանալուց 21 օր առաջ, այլապես պետք է վճարի տուքանք հետևյալ կարգով՝

- ուղևորությունից 21-15 օր առաջ պայմանագրից հրաժարվելու կամ ամրագրումը չեղյալ համարելու մասին դիմում ներկայացնելու դեպքում Պայմանագրի գնի 30% տոկոսի չափով :
- ուղևորությունից 15-7 օր առաջ պայմանագրից հրաժարվելու կամ ամրագրումը չեղյալ համարելու մասին դիմում ներկայացնելու դեպքում Պայմանագրի գնի 50% տոկոսի չափով :
- ուղևորությունից 7-2 օր առաջ պայմանագրից հրաժարվելու կամ ամրագրումը չեղյալ համարելու մասին դիմում ներկայացնելու դեպքում Պայմանագրի գնի 80% տոկոսի չափով :
- ուղևորությունից մինչև երկու օր առաջ պայմանագրից հրաժարվելու կամ ամրագրումը չեղյալ համարելու մասին դիմում ներկայացնելու դեպքում Պայմանագրի գնի 100% տոկոսի չափով:

4.2. Կատարողը իրավունք ունի չեղյալ համարել այն բոլոր ամրագրումները, որոնց համար վճարումներ չեն կատարվել պայմանագրի ստորագրման պահից հինգ բանկային օրվա ընթացքում:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի

ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհանարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահին և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, որ դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.3. Սույն պայմանագրի անբաժանելի մասն է հանդիսանում Հավելված 1-ը:

7.4. Հյուրանոցային, տրանսպորտային, էքսկուրսիոն և այլ ծառայություններ կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ այլ անձանց կողմից, որոնց հետ Կատարողն ունի համապատասխան պայմանագրեր: Նշված համագործակցության պայմանագրով ոչ պատշաճ մատուցվող ծառայությունների պատասխանատվությունը կրում է այդ ծառայություններ մատուցող կողմը:

7.5. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները Պատվիրատու՝ Կատարող՝

անուն, ազգանուն  
հասցե  
բանկային հաշվեհամար  
հեռախոսահամար

ստորագրություն

«Կասանդրա Թուրս»ՍՊԸ  
Ապրանքային նշան՝ «Hot Tours»  
Իրավ.հասցե՝ ք. Երևան, Դ. Դեմիրճյան 12-14  
Գործ. հասցե՝ ք. Երևան, Ա. Խաչատրյան 16/2  
ՀՎՀՀ 00260427  
«ԿոնվերսԲանկ» ՓԲԸ,  
Հ/Հ 19300 47198970100 AMD  
Հեռ.՝ (010) 325-326, (060) 370-377  
e-mail 1 : info@hot-tours.am  
e-mail 2: hot\_tours@inbox.ru  
www.hot-tours.com

Տնօրեն՝  
Մխիթար Մելիք-Շահնազարյան

*Հավելված 1  
Զբոսաշրջային ծառայությունների  
մատուցման N..... պայմանագրի*

Սույն հավելվածը հանդիսանում է «...».... ..... թ.-ին ..... և «Կասանդրա Թուրս» ՍՊԸ ընկերության, ի դեմս տնօրեն Մխիթար Մելիք-Շահնազարյանի, միջև կնքված N ... զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի անբաժանելի մասը և առանց պայմանագրի չունի ինքնուրույն իրավաբանական ուժ:

Սույն հավելվածում սահմանվում են Կատարողի կողմից մատուցվող ծառայությունները, նրանց տեսակները, շրջագայության ժամկետները և այլ, մասնավորապես՝

- Հյուրանոցային համալիրի, օբյեկտի լրիվ անվանումը՝
- Հյուրանոցային համալիրի, օբյեկտի գտնվելու վայրը՝
- Անձանց քանակը՝
- Անուն, ազգանուն՝
- Ժամանման օր՝
- Օրերի տևողություն՝
- Մեկնման օր՝
- Մննդի կազմակերպման և մատուցման ծառայության հաճախականություն, պայմաններ՝
- Մենյակի տիպը՝
- Շրջագայության երթուղին՝
- Տրանսպորտային միջոցների տեսակը, դասակարգումը՝
- Տեսարժան վայրերի այցելության ծրագրերը՝
- Փաթեթի մեջ ներառված այլ ծառայություններ՝

**Պատվիրատու՝**

**Կատարող՝**

անուն, ազգանուն  
հասցե  
բանկային հաշվեհամար  
հեռախոսահամար

«Կասանդրա Թուրս» ՍՊԸ  
Ապրանքային նշան՝ **«Hot Tours»**  
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Դ. Դեմիրճյան 12-14  
Գործ. հասցե՝ ք. Երևան, Ա. Խաչատրյան 16/2  
ՀՎՀՀ 00260427  
«Կոնվերսիանկ» ՓԲԸ,  
Հ/Հ 19300 47198970100 AMD  
Հեռ.՝ (010) 325-326, (060) 370-377  
e-mail 1 : info@hot-tours.am  
e-mail 2: hot\_tours@inbox.ru  
www.hot-tours.com

Տնօրեն՝  
Մխիթար Մելիք-Շահնազարյան